

— յունի մէ այսու ուշածա զա  
— կոչելոցա մէ այս հայութացաւ

## ԵՍ ԶԵԶ ԱՍՈՒՄ ԵԱ...

ԼԵԽՈՆ ՄԱՆՈՒՔԵԼԵԱՑԻ

Ես ձեզ ասում եմ, այս ողջ քաղաքը,  
Որ լուս գանում է իւր նըշաւակը,  
Թող ճահիճ դառնայ ապականութեան,  
Խնչպէս մի Սոդոմ կամ Արշակաւան,  
Եւ մարդիկ, մոռցած ազնիւը, բարին,  
Անձնագուր լինեն իրանց կըքերին.  
Թող վաճառ հանեն ամօթ, խիղճ և գութ,  
Գործիք ընդրելով սուփ, դաւ, կողոպուր.  
Յերեկը դանձեր դիզելով վրընեն  
Եւ գիշերները անքուն անցնեն  
Անառակութեան շըւայփ անկողնում,  
Արբեցութեան մէջ, զեղս օրգիայում,—  
Ես ձեզ ասում եմ—իւր մէջ կայ հաւաք  
Դէպի մարդկային առաքինութիւն,  
Եւ այնուհանդերձ նա կը մնայ հասրատ,  
Խնչպէս սըրբարաշ մարմարեայ մի սիւն:

Ինչ ամբոխ է սա? Մի հէգ բազմութիւն,  
Որ իր խըլճալի անգիրութեան մէջ  
Կարծեց, թէ գըգաւ բախտաւորութիւն  
Այնպել, որբեղից դըժոիս և նայում,  
Եւ, միջագների երամի նրան,  
Աըրայ տըւեց այն ճահիճը վըրան,

Որի շիթերը խառըն են թոյնով—  
Տառապեալների արիւն-արցունքով...

Բայց կը գայ մի օր—ագահ խուժանի  
Ընչասիրութեան եռանդը կ'անցնի.  
Եւ մինչև կոկորդ տըղմի մէջ սուզւած,  
Անզօր և դալուկ և հիասթափւած,  
Մաքուր տենչերի կարօտը կը զգայ—  
Եւ դարձի կը գայ:  
Եւր բազուկները պիտի տարածէ,  
Ճըշմարդութիւնից փըրկութիւն հայցէ...  
Եւ այն օրւանից կը հնչէ զանգը  
Մոլորեալների ապաշխարութեան,  
Եւ կը նորոգւի, կը մաքրւի կեանքը  
Հնկած բազմութեան!

18 մարտի, 1900թ.